№ 49 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 49

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՂԴԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինն է 10 դրամ, կէս տարուանը 6 դրամ. պատանդին համարները 5 շահի. արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թ. դրամները գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամ: Կիրակի եւ տօն օրերը 10—3 ժամ: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՂԴԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ.

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագրութիւնն է մէկ թուման, կէս տարուանը վեց դրամ: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետեւեալ հասցէով. Чéрезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակները և թղթակցութիւնները հետեւեալ հասցէով, Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դաւխէժում յանձնաժողովները կարող են դրամով Բաղդասար Մելիք Սահակեանցի մօտ, Սարմասում Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, Արտաշիսում՝ Յակոբ Նէլիբէկեանի մօտ, Խոյում՝ Յովսէփ Բարսղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարդալիում՝ Մելքոն Խաչատրեանցի մօտ Բաշտում՝ Ալէքսան Յովսեփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յուսահատական շարժումներ.—ՆԵՐՔԻՆ ՏԻՍՈՒԹԻՒՆ: Նամակ Սպահանից. Նամակ Դեվրիժից. Նամակ Մարաղայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն: Սրտաբին լուրեր.— ԲԱՆՍԱՒԱԿԱՆ—Գանգեր;

ՑՈՒՍԱՀԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—

Լայնածաւալ մարդկութեան կեանքի —դոյութեան կռուի—մէջ նկատւում են երբեմն այնպիսի դիպուածներ (phase) ազգի տնտեսական կեանքում, իւր բնաւորիչ ներգործութեամբ մարդկային կեանքի վերայ, այնքան նշանաւոր ու յարատեւական է լինում, որ մի առանձին դարաշրջան է կազմում ազգերի պատմութեան մէջ: Այդպիսի հենակետն նշանաւոր երեւոյթներն ունին իրանց պատմական հիմքն ու սաղմերը,— ազգերի կեանքում այդպիսի շարժումները բնական են և անխուսափելի:

Անհատական կեանքում մեզ հանդիպում են այնպիսի ճնշող բոպէներ երբ ամբողջ հասարակական կեանքի պատկերը իւր լաւ և վատ կողմերով, համակրելի և հակակրելի գործունէութիւններով, բարոյական և մտաւորական պայմաններով ներկայանալով մեր դատողութեանը, մեզանում առաջացնում է խորշանք, զզուանք և տեսութիւն, իսկ այն ոգիների համար, որոնք լոյսն ու ճշմարտութիւնը իդեալացնում են և որոնց համար անտանելի է գանազան սեղմումներ,—այդպիսի անհատների մէջ ասում ենք, լայնի հասարակութեան կեանքի սեւեռոյը — տնքնատոն պատկերը առաջացնում է ոչ միայն լոկ զզուանք՝ու տեսութիւն այլեւ դատում ընդիմահարելու, փոխելու տիրող ապականիչ խաւերը, անսանձ կամայականութիւնները: Այդ շարժումները աննպատակ, աննշանակ ու սին ցուցամոլութեան արտայայտութիւններ չեն, իրանց ազդեցութեամբ փոխում են պատմական ընթացքի ուղղութիւնը, լեղաշրջում են ազգերի դարաւոր աշխարհայեցողութիւններն ու զգացմունքները, արմատական վերափոխութեան են ենթարկում այն բոլորը, ինչ որ կազմում է նրանց տնտեսական եւ մշակութային դարերի, վերջնական, խորթ ամենայն հիմքերն՝ շրջանափոխութիւնը (évolution), որ լոյսի հանգամանքներում ու պայմաններում առաջանում է լոյսի ժողովրդի կամ ազգի տնտեսական կեանքում, իւր բնաւորիչ ներգործութեամբ մարդկային կեանքի վերայ, այնքան նշանաւոր ու յարատեւական է լինում, որ մի առանձին դարաշրջան է կազմում ազգերի պատմութեան մէջ: Այդպիսի հենակետն նշանաւոր երեւոյթներն ունին իրանց պատմական հիմքն ու սաղմերը,— ազգերի կեանքում այդպիսի շարժումները բնական են և անխուսափելի:

Անհատական կեանքում մեզ հանդիպում են այնպիսի ճնշող բոպէներ երբ ամբողջ հասարակական կեանքի պատկերը իւր լաւ և վատ կողմերով, համակրելի և հակակրելի գործունէութիւններով, բարոյական և մտաւորական պայմաններով ներկայանալով մեր դատողութեանը, մեզանում առաջացնում է խորշանք, զզուանք և տեսութիւն, իսկ այն ոգիների համար, որոնք լոյսն ու ճշմարտութիւնը իդեալացնում են և որոնց համար անտանելի է գանազան սեղմումներ,—այդպիսի անհատների մէջ ասում ենք, լայնի հասարակութեան կեանքի սեւեռոյը — տնքնատոն պատկերը առաջացնում է ոչ միայն լոկ զզուանք՝ու տեսութիւն այլեւ դատում ընդիմահարելու, փոխելու տիրող ապականիչ խաւերը, անսանձ կամայականութիւնները: Այդ շարժումները աննպատակ, աննշանակ ու սին ցուցամոլութեան

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԳԻՆԵՐԵՐ

—

—Բայց ոչ, ասաց նա ձայնը իջեցնելով—դա դանդը մի որկրամոլի, հասկանում էք, մի ղղուկի, նոր տեսակ որկրամոլի դանդ է...կամ մի բանենոյի —այդ միեւնոյն է: Զրիապիրութիւնն ու ագահութիւնը, ծուլութեան ու գծուծ ոգու հետ ձեռք ձեռքի տալով, տարել են դրան դէպի այդ արհեստը: Պաշտօնը ծգել է դրա վզին մուրացկանութեան տոպրակը, տարենէ ով կրկնուած աղօթքները թաղցրելն նրա իմացականութիւնը...ուղղի փոխարէն խրդ լցրել գլխի մէջ: Նա շահագործել է մարդկութիւնը եւ աւելի նէ՝ խոր մղել նորան իւր դառնացանքների եւ ցնորութիւնների տղմի մէջ:

Ասաց եւ շպրտեց դանդը հեռու,.. Ինչ՞ ուզ դանդը, ես չտեսայ. կարծես փոշիացաւ՝ շպրտուած Գիտութեան ձեռքով:

Երբ դաղարեցի նորա ետեւից ի՛ զուր նայելուց, արծայ եւ տնսայ նորից ծերունու վսեմ դէմքը:

Նա ծերին ունէր մի երրորդ դանդ:

III

—Իսկ այս, դոչեց նա,—կարող էք դուշակել... ոչ... շատ լաւ, իմացէք ուրեմն, որ սա մի ֆրաղեորի, մի շարլատանի դանդ է: Զը սխալուէք սրա ծակոտիներից... եթէ սա փոշուելու մօտ մի դանդ է երեւում, պատճառը այն է որ պատվիանում է մի ճոռոմաբան աղդասէրի... վսեմ մտքերով զգացմունքներ հորստանարող շանտաժիստի... դանդը նմանում է իւր մտքերին եւ խոսքերին, որոնք բանի գլխի մէջն են, նախկնսում են ուղղը, իսկ երբ դուրս գալով շփւում են ամբոխ եւ ատողջ օդի հետ, ցնդում են որպէս փոշի...

.....

Ցանկարծ տրտնը լոյսով ողողուեց եւ հսկայ դիտանակոնի դէմքը լուսավառուեց: Կանգնաւ նէ՝ ցած դրեց դանդը, մի ստրկամտրսական շարժումով՝ հեռու մղեց նրանց, առաւ ծերը գաւազանը եւ մեկնեց խստիր:

Խօսեց, նա կրակոտ, արագ եւ երբ

ուում էր նրա հասակը՝ հետզհետէ պայծառացող լուսոյ միջից նրա աչքերը բոցեր էին արձակում, մի հիացում զծուած էր կերպարանքի վերայ: նա նայում էր վեր—դէպի առաջ...

Որքան յուզուած էր նորա ձայնը, որպիսի խանդով նա ծերը առաջ էր պարդում, ապա իջեցնում էր եւ մեղ դարձնում: Ու ոգեւորութեան արցունքներ ցայտում էին նրա աչքերի վերայ:

Խօսում էր նա աղդասիրի, առաջդիմութեան վերայ. նահատակների մասին ասաց, այն բոլոր նահատակների, որոնք ընկել են կամ ընկնում էն մի որեւիցէ գաղափարի վերայ, ազատ գործի համար, յանուն գիտութեան, յանուն ազատութեան...

Դրամներիս արիւնը եռաց, ջղերս էլեկտրուեցին:

—Ես էլ, ես էլ... դոչեցի:

Եւ վեր թռայ:

Ախ, որքան կուզէի կարող լինել պատմելու նորա ասածները, նահատակների մասին... որքան:

Բայց... ստիպում են լռել. «չէ՛ պէտք—ասում են—սաղերի գոդռել»...

Վ. Փափազեան.

արդիւնք չեն, այլ բղխում են կենսական աննօրմալ—իւր իսկական, բնական վիճակում չեղող—պայմաններից, պայմաններ, որոնք իրանց սաստիկ ճնշումով բնական պայթիւն են առաջացնում։

Այդ միևնոյն երևոյթը առաջ է գալիս և նման պայմաններում ապրող ժողովուրդների ևազդերի թէ անցեալ և թէ ներկայ կեանքում։ Քննեցէք պատմութիւնը, ազգերի կեանքն ու շարժումները և բնականապէս առաջ եկող պատմական երևոյթները. դրանք պերճախօս ապացուցութեամբ կը համոզեն ձեզ վերոյիշեալ աքսիօմի մէջ։

Դարերի ընթացքում տիրում է զօրաւորի, ուժեղի կամքը, քմահաճոյքը, որից ամբողջ հասարակութիւնների վերայ տարածւումէ անշարժութիւն, մեռելութիւն, մարդկային կեանքը լճանում, ճահճանում է. մեռնում են մարդկային գիտակցական մտածման ու գործելու դրդիռները, մարդ կորցնում է իւր սեփական պատկերը, դիրքը և այդ բոլոր ճնշող բեժիմի հետևանքը լինում է այն, ինչ որ բնական էր, ինչ որ անխուսափելի էր։ Այդ խեղդող կարգերը, ազգերի ընկերական կեանքի աննպաստ պայմանները դրդում են դէպի յուսահատական շարժումներ, դէպի մի այնպիսի վերջնական, ճակատագրական միջոցի, որը նրանցհամար կամ կեանք է բերում և կամ մահ,—մահ որ աւելի քաղցր, աւելի վեհ, աւելի գերադասելի է քան այնպիսի կեանք, որ իսկապէս թոյն ու տանջանք է արտադրում։ Յիշեցէք Ե.որդ դարի հայոց համազգային յուսահատական շարժումը. դա լոկ մի կրօնական մարտ չէր, այլ մի կռիւ, պայքար, որ բղխում էր Հայաստանի հայ ժողովրդի ընկերական պայմաններից նրանց տնտեսական կեանքի աննպաստ կազմակերպութիւնից. դա մի գոյութեան կռիւ էր, որի ծագումն ու արմատը գտնւում էր Հայաստանցու մարդկային իրաւունքների գիտակցութեան մէջ։ Պատմութեան մէջ այդպիսի նշանաւոր գիտակցական քայլեր շատ չեն պատահում ժողովրդի կամ ազգի մի որոշ շրջանում. բայց երբ ժայթքում է այդ հրաբորբոք լաւան, նա տարածւում է շատ հեռաւոր սահմաններ, ազդում ու լեղաշրջում է ամբողջ ազգեր ու ժողովուրդներ, հանդիսանալով նրանց մտածման ու գործունեութեան եղանակների բարեշրջումով։ Այն ազգը կամ ժողովուրդը, որը ընդունակ է դուրս գալ ընդհանուր շրջապատից և մարդկային արդարացի բողոք բարձրացնել տիրող մահացութեան ու խաւարիհամար յուսահատական շարժում, մահու և կեանքի պայքար մղելով նրա դէմ, այդպիսի ժողովուրդը արժանի է ընդհանուր համակրութեան, խրախոյսի և քաջալերութեան։

Խանզադէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ Սպահանից

—

Նոր-Ջուղա 9 Դեկտ. 94

Ձեր թղթակցի հաղորդած մէկ տրխուր լրոյն նկատմամբ թերեւս շատոնք մեր հեռաւոր ազգայիններից, հետաքրքիր են իմանալու թէ արդեօք մինչև քանի աստիճան տխուր վիճակի մէջ են գտնվում աեղւոյս հասարակական գործերն կամ քանչափ յարաբերութիւն ունին Եսայի սրբազան և տեղապահ հայոց սուրբն միմեանց. հետթէպէտ և մենք չենք ուզում „Շաւղի“ թղթակցի չափ յուռեռես լինել, միանգամից յայտարարելով թէ երկու հոգեւոր պետերի յարաբերութիւններն լարուած դրութեան մէջ են։ Սակայն չեն կարողանում բոլորովին չկասկածելներանց փոխադարձ բարեկամութեան վերայ. ի հարկէ այս մասին ունենք մեր ներքին համոզումն. ապացոյցներ ևս պակաս չեն։ Քիչ է մնում լրանայ երկու ամիսը որ այստեղ է ժամանած հայոց սուրբն. առաջին օրից սկսեալ 'ամէն կիրակի առաւօտ տեղացի հասարակութիւնը խուռներամ բազմութեամբ դիմում է Ամեն. վանքի եկեղեցին, լսելու Վ. Եհ. Հայրիկի նոր կոնդակն և վեհարանէն նոր ելած վարդապետի քարոզները. բայց ինչ հիանալի ապշութեան և տխուր յուսախաբութեան մէջ է գտնւում քարոզի ծարաւ ժողովուրդը, երբ տեսնում է սովորական ծիսակատարութիւնից և անհոգի ձևականութենէ շատ ուրիշ ոչինչ..... ապշեալ, տարակուսեալ, յուսահատ ժողովուրդն սկսում է ինքն իրեն հարց անել թէ արդեօք ինչ է պատճառն այս անսպասելի լռութեան. միթէ սա այն վարդապետն չէր ոչ Ռաշտ և Թէհրան հասածին պէս անդադար քարոզում էր եկեղեցիներում ատենաբանում էր գրական երեկոյթներում և ազգային ընդհանուր ժողովներում։ Ուրեմն ինչ կը նշանակէ այստեղ որ իւր պարտականալ վիճակն է և բնականապէս աւելի անհրաժեշտ պարտք կայ իւր վերայ քարոզելու, յորդորելու, խրատելու կամ գոնէ մի անգամ ընդ միշտ ժողովրդին յայտնելու իւր գալու նպատակն, այսպիսի խորհրդաւոր լռութիւն է պահպանում և միայն ստուերի դեր կատարում եկեղեցում կամ առանձնացեալ սենեկում, այս պարագայից ներքոյ ոչ ապաքէն ժողովուրդն իրաւունք է սանում կարծել որ կամ հայոց սուրբն փափաք և կամք չունի կոնդակ կարդալու և քարոզ խօսելու և կամ արտօնութիւն չունի սրբազան առաջնորդէն. թէ այսպէս թէ այնպէս, չըկայ այսօր մէկն ամբողջ Ջուղայի հասարակութեան մէջ որ գիտենայ թէ ինչի համար է եկած վարդապետը. նուիրակ է արդեօք թէ քննիչ. և մթթէ ջուղայեցին մինչև այս աստիճան է անզարգացած ու արհամարհուած իւր հոգևոր հովիւներից որ չ'պէտք է անդամ իմանալ թէ ով է իւր տան մէջ բնակւող հիւրն. ինչ է նրա պաշտօնն կամ ինչ է իւր պարտաւորութիւն դէպի նրան՝ եթէ խրտուիլակ է միայն, արդէն առանց նրան էլ Եսայի սրբազանն կատարում է խրդուիլակի դեր. այնպէս որ ջուղայեցիք հազիւ երբէք վստահանում են մուտ դործել վանքն և վանքի շրջապատող տների մօտ փողոցով անցնողն անգամ ահ ու դողի մէջ է լինում շատ անդամ թէ մի գուցէ յանկարծ շրջապատեն զինքն վանքի առատ հաց ու կարագ ուտող ու հին գինի անուշող հաստավիզ ու հաստափոր ծառաներն և անմիջապէս բանտարկեն վանքի նկուղների մէկի մէջ։... Ցանկալի էր մեզ իմանալ թէ ինչ է պատճառն որ դժբաղդ ջուղայեցին առհասարակ ենթարկուած է սրբազան եպիսկոպոսի այս աստիճան անտանելի ատելութեան։ Սրբազանն տիրում է կզգիացած մնալ միշտ, [illegible] ինքնարուն գործել, ինքնագլուխ իսկ Ջուղայի հասարակութիւնը ամենևին հաղորդակցութիւն չունի եպիսկոպոսի հետ, ևս ամենաչնչին տեղեկութիւն ընդհանուր աղգային գործոց դրութենէն. եպիսկոպոսն չէ համակրում ժողովուրդին, ժողովուրդն ևս հակակրում է եպիսկոպոսին։

(Կը շարունակուի)

Նամակ Դավրէժից

—

29 Նոյ. 94

Նկատելով այն անտարբերութիւնը, որ տիրում է մեր ժողովրդի մէջ դէպի իւր հասարակական հիմնարկութիւններն ու գործիչները, մարդ քարանում է. ինչ է նշանակում երկսեռ դպրոցներ, դրադարան—ընթերցարաններ եւ ուրիշ այդ կարգի հաստատութիւններ ունենալ եւ պահել իւր սեփական քրտինքի վաստակով եւ բոլորովին հեռու, չեզոքացած մնալ նրանց գործունէութեան վերաբերմամբ։ Միծաղելին այն է, որ ժողովուրդը չէ ճանաչում իւր ուսուցիչներին՝ նոյն իսկ անձնականապէս եւ եթէ մի տեղ հանդիպում է ուսուցիչների մէկին, նա ստիպուած հարցնում է իւր մերձաւորից կամ մի ուրիշից, թէ ով է սա։

Շատերը միամտաբար պոռում են՝ ժողովրդական ընտրութիւն, ընդհանուր համաձայնութիւն, եւայլն, եւայլն. բայց այդ բոլորը հէնց իրանց ֆանդազիայով լեցուն գլուխների մէջ գոյութիւն ունին եւ ոչ իրականութեան մէջ։ Եթէ այսօր մեր ժողովուրդը համակրութիւն չէ ցոյց տալիս դէպի ընդհանուր նշանակութիւն ունեցող մի որեւիցէ խնդիր, եթէ նա այդպիսի դէպքերում բոլորովին ձեռնթափ է մնում, չը մասնակցելով ոչ մի գործի, դրա պատճառը, մեր կարծիքով, այն կզգիացած կեանքն է, որ վարում են ժողովրդի ինտելիգէնտ մասը եւ ուսուցչական խմբերը։ Ինչու, իդէալիստ պարոններ, հարուստ աղաների, հոգաբաց ծուների եւ ուրիշ փայլուն դիրք ունեցողների տների շէմքը կը մաշէք, իսկ գէթ մի անդամ լայնդ չէք անել մտնել այն արհեստաւորի պարզ, անպաճոյճ բնակարանը, որի կոշտացած ու կեղտոտ ձեռքի—այն ձեռքի՝ որը ցոցուելը ամօթ էք համարում—աշխատանքովն էք դուք ապրում։ Այո, շատ հեշտ է ոգեւորուել ու փքանալ ներկայումս մոդա դարձած ոամկասիրական, պլատոնական սիրով,

բայց իրականութեան մէջ... այդ մի ասէր, մի գործն է դպրոցից դէպի սեղան, սեղանից դէպի հնչտեղ, իսկ հնչտեղից կրկին դէպի դպրոց՝ հաղորդակցութիւնը միշտ կենդանի պահել... պրծանք գնաց. ահա թէ ինչ պատասխան են տալիս մեզ դաղափարականները:

Անցեալ տարիներում կիրակնօրեայ դպրոցներ կային, բայց դրանք եւս փակուեցան շնորհիւ դ. բեալ մի քանի իդէալիստների եւ այդպիսով ժողովուրդը զրկուեցաւ այն միակ միջոցից, որով նա յարաբերւում էր հասարակական գործիչների եւ հիմնարկութիւնների հետ:

Մենք սիրում ենք յուսալ, որ ներկայ ուսուցչական խմբերի մէջ կը գտնուին այնպիսիները, որոնք չեն ծուլանալ իրանց կոչմանը արժանի մի գործ կատարել, կրկին բարձրացնելով կիրակնօրեայ դպրոցի վերաբացման հարցը եւ առաջ տանելով ու իրագործելով այդ միտքը: Խնդրում ենք դէն ձգել զգուշ անձնական, ստոր շահերը կամ վէճերը, դաղափարական կուսակցութեան դիմակով պարուրելու զգուելի սովորութիւնը: Ժողովուրդը սիրշ պահանջներ ունի ձեզանից, նա կարօտ չէ ձեր անձնական [illegible] ու հայհոյանքների հոչակին: Սրանով [illegible] ուզում պարապել դաղափարական, անկ[illegible] կուսակցական գործիչներին կամ նրանց գործունեութիւնը, ոչ, ընդհակառակն, մեր կարծիքով [illegible] հարկան, անկեղծ, դաղափարական կուսակցական գործունէութիւնն է, որ հրաշքներ կարող է գործել ժողովրդի առաջդիմութեան գործում. բայց ստոր, դատապարտելի է այն մարդկանց ընթացքը, որոնք իրանց եսական նեղ գործերի մէջ խառնում են դաղափարական կուսակցութեան տնուներ. այդտեղ արդէն ամեն մի սրբութիւն ընկնում է ժողովրդի աչքից որի հետեւանքը լինում է այն տխուր երեւոյթը, որ այսօր նկատւում է մեր ժողովրդի մէջ որի պատճառով եւ նա երես է դարձնում ամեն մի դաղափարական գործից....

Հ—Տ

Նամակ Մարաղայից

—

15 Դեկ. 94

Տեղւոյս ազգային դրադարան—ընթերցարանը երեք տարի միայն, եթէ չեմ սխալւում, գոյութիւն ունենալուց յետոյ, այսօր շնորհիւ մի քանի ոգեւորուած ու եռամոլ անձանց,—որոնք ինքն իրանց գլխին, առանց ընտրուելու, յանձն են առել սոյն դրադարան—ընթերցարանի ղեկավարութեան պաշտօնը,—հոգեւարքի մէջ է գտնւում, և հէնց արդէն մեռած պիտի համարել, քանի որ չի ստանում նա հայկական ոչ մի թերթ *) և իւր ունեցած գրքերն էլ տարապայման մատնուել են մեր Թաֆֆիի յիշած Կոտուց անապատի վանահօր գրադարանի գրքերի ողորմելի վիճակին: Դատապարտուածի նման գրքերը փակուել են պահարանի պատերի մէջ, և փտում են փոշու ու մուրի մէջ: Եթէ մի ընթերցասէր ոմն կամենում է մի գիրք առնել ընթերցարանից կարդալու համար, ամիսներով պիտի դէս ու դէն ընկնի, մինչև կարողանայ իւր ուզածը ձեռք ձգել:

*) Ստանում է միայն «Արմէնիա» եւ «Շաւիղ» դուռնը էլ յողորմութիւն Մարաղայի չքաւոր (?) հայ հասարակութեան մրի են ուղարկւում:

Հասարակական, ազգային մի հիմնարկութիւն թողնուել է կամայականութեան:

„Մարաղայի հայ ազգաբնակութեան հասարակական խնդիրները բաւական բարդ են: 2000 հոգուց բաղկացած մի ազգաբնակութիւն բաժանուել է մի քանի որոշ կուսակցութիւնների, և գրեթէ բաղդաբար այդ կուսակցութեանց բոլորի էլ նպատակը ու ձգտումը գտառսիրական տեսակէտից է: Այդ կուսակցութեանց ընդհարումներից յառաջացած վնասը կրում են միայն ազգային բարենպատակ հիմնարկութիւնները:

Ապասում ենք, որ շուտով Տէր Տաճատ քահանան վերջ տայ վնասակար, կործանիչ կուսակցութիւններին:

Օրոր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր ժամը 9-ին, մեծ շքեղութեամբ մուտք գործեց քաղաքս Ն. Կ. Մ. Մոզաֆար-ադ-Դին Միրզա Թագաժառանգ Իշխանը:

—

Քաղաքումս Դէֆդերիաը մանուկների մէջ սաստիկ կոտորած է անում: Հարկաւոր է ծնողներին իմանալ որ այդ հիւանդութիւնը արագ վարակիչ է և պէտք է միւս մանուկներին չը թողնել մանելու իսկ հիւանդի սենեակը: Հիւանդութեան նշանները երևալուն պէս պէտք է անմիջապէս չը խնայել բժշկի խորհուրդին դիմելու և կատարելու համար:

—

Հայկազեան ուսումնարանի ուսուցչական խումբը դեկտ. 31-ին կը տայ մի երեկոյթ, որի վերջումը կը լինի տոնածառ և կը բաշխուին ընծաներ աշակերտներին: Երեկոյթի պրոգրամը հարուստ է և բազմակողմանի. կերգուին խմբական երգեր, կը նուագուին ասիական և եւրոպական կտորներ ջութակի, կանոնի և թառի վերայ ընկերակցութեամբ և մենակ, կը կարդան բանաստեղծութիւններ և մանուկները կը կատարեն մի պարերգ, (solo) սկիզբն է ժամը $5^1/_2$-ին. տոմսակները շատ էժան են: Երեկոյթը յոգուտ դպրոցի է: Պրոգրամը եկող համարում կաշխատենք տպագրել:

—

Դավրէժից մեզ գրում են: Հաւանութիւնը յայտնելով սրբազան առաջնորդից, իրանց գիւղի յարգելի գործը յանձնել են Դավրէժ գտնուող իրանց հայրենակից մի վաճառականի, որ մի կերպ համաձայնութիւն կայացնէ իրանց և զալարազիի մէջ:

—

Ինչպէս լսում ենք, Սպահանից Այտեան վարդապետը զրել է որ Թէհրան է գալու. այդ տարօրինակ է թւում, ինչպէս է թողնելու սպարէզը Եսայի եպիսկոպոսին, չէ՞ որ հարկաւոր է երկաթը տաք տաք ծեծել:

—

Սպահանից մեզ գրում են, որ Եսայի եպիսկոպոսի հրատարակած հաշուետետրից, որի համար նա արքութիւն է ստացել Կաթուղիկոսից, և որ մի հատ էլ Զուղայում չէ [illegible] Եսայի սրբազանը էլ ուզմն է հաշիւ տալ [illegible] հատատորներին. չէ որ նա ժողովրդի հետ գործ ունի և նրան է պատասխանատու միայն: Սրբազանի այդ վարմունքը անբացադրելի է, ցանկալի էր որ ինքը պատասխանէր իր դէմ ուղղուած ամբաստանութիւններին թէ այս լուրով և թէ Զուղայից գրուած թղթակցութիւններով. այլապէս մենք ստիպւում ենք հաւատալ որ սրբազանի մասին այդ և այլ շատ պատմուած բաները իրողութիւններ են: Սպասում ենք մանաւանդ որ սրբազանը մեզ և ժողովրդին բացատրէ իր վարմունքների մասին դէպի սպահանցիք և իւր ընդհարումները՝ Այվատեան վարդապետի հետ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մամուլի Տեսութիւն

—

Փոստն ուշանալուն համար, այս շաբաթ Պովկասից ոչ մի լրագիր չունինք, դրա փոխարէն ստացուել են „Արմէնիա“ և „Հայրենիք“:

„Արմէնիան“ այս վերջին մի քանի համարներում մի քիչ միայն ցոյց է տալիս, որ զբաղւում է յեղափոխութեամբ բայց տասն անգամ աւելի քիչ՝ քան Պովկասի ամենայետին թերթը: Դրա փոխարէն նա լուսանքներ է տեղում այն բոլորի դէմ, որոնք դէմ են „Հայոց եկեղեցւոյն և կրօնին“: Այնպէս օրինակ № 36-ում Աղերիկայից, մի նամակը, որում կը գտնէս հետեւեալ խօսքերը, „Անհնարէ մեզ համար ատոնց հետ հաշտուիլ (մի լրագրի կուսակիցների համար է ասուած) մինչ՝ որ ամեն յարաբերութիւն չը խզեն (լրագրի) հետ, որ դաւաճան ու թշնամի է հայ ազգութեան և Հայաստանեայց եկեղեցւոյն“:

Դաւաճան և թշնամի... այդ բառերը գործածւում է մի հայ թերթի համար, որի գործունէութեան $^1/_{10}$-ի՞ առջև իսկ նսեմանալուց կը ջնջուի „Արմէնիան„ չը նայելով որ այդ յիշուած թերթը միմիայն սխալներ ունի և ոչ թէ ուրիշ բան, իսկ սխալների կամ երազների համար մէկինդաւաճան կոչելը միմիայն „Արմէնիան“ էընդունակ անել, “Արմէնիան„, որ կերել է և ուտում է հայ ազգի դրամն և զգացմունքները:

Այն ազնիւ երազների փորձերի հեռաւոր ապագայի համար, որպէս անում է „Արմէնիայի“ “դաւաճան„ կոչած թերթը

այնպիսի վսեմ մեծութիւն ունին, որ „Արմէնիայի“ արածը նմանում է փղի դէմ քոթոթի հաջելուն։

Բայց տեսնենք էլ ուրիշ ինչ ունի Մարսիլիայի Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայ ազգութեան պաշտպան կոչուելու յատկանութիւն ունեցող թերթը։

Մի շատ սիրուն ոտանաւոր զարդարում է նորա այս անգամ եկող համարներից մէկի մի էջը։

Դուզէք ճաշակել նրանից. համեցէք։

Ե՛րթ անմիտ վատ
Թերահաւատ
Հարամ մոր ծիծ
Քեզ, անիծից
Քօսեալ արմատ
Խօսեալ արմատ.

Եւ յետոյ, քիչ հեռու, մի ուրիշ այդպիսի մարգարիտների փնջիկ,

Աւան, վա՛շ, վա՛շ
Լկտի վաւաշ
Միտք շեղաւոր
Սիրտ մեղաւոր
... ...
Ե՛թ կամակոր
Դժոխորկոր
Դիւախանգար
Գլուխդ ի քար

Եւ այդ գոհար ոտանաւորի համար հեռաքրքիր էր իմանալ թէ քանի բաժանորդագին է վճարած, որ տպագրութեան արժանի է համարուել։

Վայ ձեզ բանաստեղծներ „Արմէնիան“ հացներդ կտրում է։

** „Հայրենիքի“ մէջ միայն ընթերցանութեան կտորներ շատ կան, իսկ ազգային կեանքի մասին գրէթէ ոչինչ։ Նրա սի համարի մէջ ուշադրութեան արժանի լուրը այն է, որ մի յոյն Կրէտէի մէջ, Նիքոլա Վէքթաքի, մեռնելով, Կրէտէի ուսումնարանին կտակել է մէկ ու կէս միլիոն ֆրանկ։

Այս առաջինը չէ. յոյների մէջ սովորական է եղել այդպիսի նուէրներով և կտակներով հարստացնել իրանց կրթական հիմնարկութիւնները ճիշդ հակառակ հայկական սովորութեան, որ մինչև իսկ ուտում է և փչացնում մուրալով ձեռք բերուածները։ Որ յոյները շատ աւելի զարգացած ազգ են քան թէ հայերը, դա փաստ է։ Իսկ որ նրանք շատ աւելի գործնական ազգասէրներ են քան մեր մէջ եղող ֆրազեօր շառլատանները, որոնք սուտ ճշնաւոր են լինում և վանքի հաւերն են ուտում, այդ էլ պարզ երևում է։ Ոչորմելի ազգ ենք, այնքան ողորմելի, որ մի չինացի կարող է ցաւել մեզ վրայ, մեր ուսումնարանների դրութեան—մեր հասարակական գործերի խայտառակութեանց վերայ։

** Բայց այժմ մի քանի նոր գիւտերի մասին, քաղելով եւրոպական թերթերից։

** Ժնէվի համալսարանի պրոֆ. Շ. Մարգօն գտել է, որ ալիւմինիումով կարելի է գրել և գծել ապակու վերայ, մանաւանդ երբ ապակին քիչ թացացուում է կամ ծածկուում թեթև շոգիով և երբ ապակին և ալիւմինիումի կտորի ծայրերը մաքուր են։ Նկարները երևում են մի սքանչելի փայլուն լոյսով և լետոյ մի մետաղեայ գործիքով էլ երբ հարթուում է, յատանում են ուղղակի մետալիքական գծայլ։ Արպէ՞սի գեղեցիկ զարդերի աղբիւր է բաց անում այդ նոր գիւտը։

** Էլեքտրական լոյս, էլեքտրականութեամբ օջախ և ահա այժմ էլ գտնուել է էլեքտրականութեամբ տաքացող վերմակներ. այդ վերմակը ներսից ունի մի թեթև գործիք, որը հաղորդուում է ծայրերով մի էլեքտրական աղբիւրի հետ և որը տաքացնում է անկողնին ինչ աստիճան որ կամենում է տերը և որքան ժամանակ որ ուզում է։

Էլեքտրականութիւնը, ինչպէս երևում է, քսաներորդ դարի շարժիչը պիտի լինի, նա արդէն սկսել է հրաշքներ գործել արուեստագիտական աշխարհում։

** Զգուշացէք ոսկեղէն զարդեր գործածողներ, և դուք, ոսկով բարձած էշեր և ոսկիով „մարդ“ դարձած լիմարներ, որովհետև այժմ ոսկին էլ սկսել են կեղծել այնքան ճշդութեամբ, որ ամբողջ Ռուսաստան և Գերմանիան վարակուել է և սոսկում է դրանից։ Այդ կեղծ ոսկին շինուում է արճիճի, զինկի և պղնձի խառնուրդից, որ յետոյ որպէս հեղուկ անց են կացնում մի թրջուած աւելի միջով. աւելի վերայ մնացող կաթիլները ստանում են ոսկի աւազի մէջ գտնուող հատիկների կերպարանք։ Կեղծ ոսկի շինողները, աւելի հեշտութեամբ խաբելու համար, այդ հատիկները ծածկում են մի թեթև ոսկեզօծութեամբ և ահա այսպէս պատրաստուած ոսկին սպառնում է տակն ու վրայ անել ոսկերիչների, հարուստների և զարդասէրների։

** Արդէն յայտնի են գորտային օդաչափերը (baromètre). Դա բաղկացած է մի տման ջրից, սրի մէջ կայ մի գորտ և մի փայտի սանդուխ։ Եթէ գորտը մագլցում է սանդուխի վրայ և ջուրից դուրս է գալիս, անձրևը շուտով պիտի սկսի գալ։

Բայց շատերին յայտնի չի լինիլ տզրուկային օդաչափը։

Բանից դուրս է գալիս, որ տզրուկները աւելի առաջ են զուշակում վատ եղանակը։ Եթէ անձրև է գալու, 24 ժամ առաջ ջրի երեսն են ելնում և մինչև որ եղանակը չը լաւանայ, չեն լողնում ջրի մէջ։

Դոքտոր Մերիվօթեր նարերումս յաջողուել է այնպէս մի գործիք շինել, որի միջոցաւ տզրուկը զանգ է խփում երբ եղանակը վատանալու է։

** Շատերին յայտնի է անբերբիութեան (stérilisé) ենթարկուած պաշարեղէնների տարածուիլը։ Այդ ուտելիքները մեզ թոյլ են տալիս ոչ միայն ապահով լինիլ որ ոչ մի միկրոպ կամ բացիլ չենք կուլ տալիս, այլ և միշտ ունենալ թարմ և էժան սնունդ, որքան որ ուտելիքները հեռու տեղից գան։ Օրինակ, Շվեյցարական կաթը նոյն թարմութեամբ, անբերբիութեան միջոցով, հասցնում են մինչ։ Փարիզ։

Ահա այդ մի ջոցը, որ շատ հեշտ է։ Ամեն հեղուկ, կաթ և այլն ենթարկելով 68° (ցելսիուսի) տաքութեան, ոչնչացուում է ամեն տեսակ բացիլ. ջերմի, տիֆի և այլն իսկ նրա թարմութիւնը ընդ միշտ պահպանելու համար հարկաւոր է 106° տաքութեան ենթարկել։

Դրա համար մինչև իսկ կայ Լէգէյի անբերբիացնող շիշը (stérilisateur)։ Դիֆդերիտի և առ հասարակ բոլոր վարակիչ հիւանդութիւնների ժամանակ շատ օգտակար է խմելիքները ենթարկել առողջապահական այդ միջոցին, որով մի անգամ ընդ միշտ հեղուկները կարելի է հոտելուց կամ վարակելուց ապահովեցնել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են որ Հալէբից Կ. Պոլիս գնացած մի հեռագիր իմացնում է Սսոյ կաթուղիկոս Մկրտչի մահը։

—Յունաստանի աշխարհահռչակ վիպասան Էմիլ Զոլան, որ Հռոմի է գնացել ուսումնասիրելու համար իւր „Rome“ վէպի նիւթը, պատից խնդրել էր ունկնդրութիւն, բայց մերժուել էր, այժմ նա սիրալիր ընդունելութիւն է գտել իտալական Ռոմպերտօ թագաւորի կողմից։

—Թայմզին հեռագրումեն որ Ժապոնիան մտադրութիւն է ցոյց տալիս կռիւը շարունակելու։ Զմեռուայ ընթացքում նա պատրաստութիւններով է զբաղուում։

Դեկտ. 2-ին Միացեալ նահանգների արտաքին գործերի նախարարութիւնը հեռագիր է ստանում Պեկինից, որ չինացիք ուզում են յարձակուել ամերիկական դեսպանատան վրայ. դեսպանը օգնութիւն է խնդրում։ Մինիստրութիւնը հեռագրեց որ պէտք եղած միջոցները իսկոյն պիտի գործադրուի։ Չինաստանում առհասարակ մեծ խառնաշփոթութիւն է տիրում։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԵԱՍ ԲԻԿՆԱԶԱՐԵԱՆՑ